ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Մարզի Գավառի, Ճամբարակի, Վարդենիսի, Մարտունու և Սևանի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2010թ. ընտանեկան նպաստի, միանվագ դրամական օգնությունների նշանակման, դադարեցման վերականգման հարցերում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքները ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /նախագահ/

Խաչատրյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ

Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Թադևոսյան Է. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Հանձնաժողովին՝ երկամսյա ժամկետում ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետի քննարկմանը:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ